ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2019թ. թիվ 65-Ա

ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի ԹԻՎ 23-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառման և բնակելի տարածությունների հատկացման կարգը հաստատելու մասին» N 330 որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն ծառայության պետի 19.02.2019թ. թիվ 01/11/917-19 գրությունը և հաշվի առնելով կատարված կադրային փոփոխությունները՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Ստեղծել բնակարանի կարիք ունեցող փախստականների ընտանիքների բնակարանային պայմաններն ուսումնասիրող Լոռու մարզային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2012թ. փետրվարի 6-ի «Բնակարանի կարիք ունեցող փախստականների ընտանիքների բնակարանային պայմաններն ուսումնասիրող Լոռու մարզային հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 23-Ա որոշումը:

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. փետրվարի 27
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2019թ. փետրվարի 27-ի
թիվ 65-Ա որոշման

Կ Ա Զ Մ

Բնակարանի կարիք ունեցող փախստականների ընտանիքների
բնակարանային պայմաններն ուսումնասիրող
Լոռու մարզային հանձնաժողովի

Ա.Ղուկասյան - հանձնաժողովի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետ

Ա.Ջանազյան - հանձնաժողովի նախագահի տեղակալ, մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ

Ի Գրիգորյան - հանձնաժողովի քարտուղար, մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի անդամներ.

Ժ.Ղազարյան - մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի պետ

Վ.Դանիելյան - մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի առաջատար մասնագետ

Ս.Մկրտչյան - Վանաձոր համայնքի սոցիալական աջակցության տարածքային բաժնի պետ տեղակալ (համաձայնությամբ):

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Invalid signature

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ